ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ ԳՈՒՐԳԵՆԻ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)

ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АВЕТИСЯН ЭДГАР ГУРГЕНОВИЧ

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ И ЗАЩИТЫ СВОБОДЫ ИНФОРМАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ ГАРАНТИЙ И ЕВРОПЕЙСКИХ ПРАВОВЫХ СТАНДАРТОВ)

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանում

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, **Աշոտ Սերյոժայի Հայրապետյան,** իրավաբանական գիտությունների թեկնածու **Վարդանուշ Ռոլանդի Պողոսյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Պաշտպանությունը կայանալու է 2023 թվականի հուլիսի 11-ին ժամը 15:00-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի մայիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու՝ Ջ. Հ. Հայրապետյան

Тема диссертации утверждена в Европейском университете Армении

Научный руководитель:	доктор юридических наук, профессор **Ашот Айкович Хачатрян**
Официальные оппоненты:	доктор юридических наук, **Ашот Сережаевич Айрапетян,** кандидат юридических наук **Вардануш Роландовна Погосян**
Ведущая организация:	**Академия государственного управления РА**

Защита состоится 11 июля 2023 года в 15:00 на заседании 063 Профессионального юридического совета ВКК РА в Российско-армянском университете (0051, Ереван, Овсеп Эмини 123).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Российско-армянского Университета.

Автореферат был доставлен 30 мая 2023 года.

Ученый секретарь профессионального совета,
кандидат юридических наук Дж. А. Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը. տեղեկությունը մարդու ամենօրյա անհրաժեշտություններից մեկն է, առանց որի դժվար, նույնիսկ անհնար կլինի առօրյա որոշ պահանջմունքների բավարարումը: Միաժամանակ, առատ տեղեկությունների այնպիսի ժամանակաշրջանն, ինչպիսին այս է, առաջ է քաշում տեղեկությունների ազատ շրջանառման՝ փնտրելու, ստանալու ու տարածելու հարաբերությունների իրավական համաժամանակյա ուսումնասիրման ու գնահատման ուղիղ հրամայական:

Պետությունը, ստանձնելով մարդու հիմնական իրավունքների պաշտպանության պարտականություն և ճանաչելով մարդուն որպես բարձրագույն արժեք, հանձն է առնում մարդու համար ապահովել բոլոր անհրաժեշտություններն ու արդարացված պահանջմունքները, որոնք այս դեպքում դրսևորվում են տեղեկություններ փնտրելու, ստանալու ու տարածելու պահանջ-իրավունքով՝ տեղեկատվության ազատությամբ: Վերջինս արտահայտվում է մի կողմից՝ ցանկացած տեսակի տեղեկություն փնտրելու, ստանալու և տարածելու ազատության ապահովմամբ, մյուս կողմից, հաշվի առնելով իշխանության պատկանելիությունը ժողովրդին, հետևաբար և՝ իրեն պատկանող իշխանության գործունեության մասին առավելագույն տեղեկացված լինելու անձի իրավությունը, հանրային իշխանության մոտ գտնվող տեղեկությունները ստանալու իրավունքի ապահովմամբ:

Ատենախոսական թեմայի կարևորությունն արտահայտվում է ժողովրդավարական պետությունում տեղեկատվության ազատության ունեցած նշանակալի արժեքով: Այս ազատությունն արժանի է համարվելու ժամանակակից պետության ժողովրդավարության ցուցիչ, որտեղ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովման ու պաշտպանության չափանիշը կարող է ձևավորել տվյալ պետության ժողովրդավարության աստիճանը: Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ նաև՝ ՀՀ), հանդիսանալով ժողովրդավարական պետություն, մայր օրենքով ամրագրում ու պաշտպանում է տեղեկատվության ազատությունը՝ որպես հիմնական իրավունք: ՀՀ-ն տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը ճանաչում է Սահմանադրության երկու հոդվածների՝ կարծիքի արտահայտման ազատության (հոդված 42) և տեղեկություններ ստանալու իրավունքի շրջանակում (հոդված 51): Սահմանադրի նման մոտեցումից բխում է տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի բազմաբովանդակ բնույթը: Մարդու իրավունքների պաշտպանության համար անկյունաքարային հանդիսացող միջազգային պայմանագրերում ևս ճանաչվում ու ընդգծվում է տեղեկատվության ազատության կարևորությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում տեղեկության հետ մարդու հարաբերության շրջանակի ընդլայնմամբ, ինչի հետևանքով օրեցօր ավելի է խստանում մի կողմից՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու ու տարածելու հարաբերություններին

իրավական գնահատական տալու, մյուս կողմից՝ մարդկանց առավելագույն իրազեկվածության ապահովման պահանջները:

Իրավագետները տեղեկատվության ազատությունը մեկնաբանելիս ու հետազոտելիս բախվում են դրա ժամանակակից էության ու նշանակության վերհանման խնդրին, որն ավելի է ամրապնդում սույն թեմայի վերաբերյալ հետազոտության անհրաժեշտությունը: Տեսաբանների մի մասը (օրինակ՝ Ջ. Աքերմանը, Թ. Մըգանըգլը) տեղեկատվության ազատությունը ներկայացնում են ավանդական մոտեցմամբ՝ սոսկ որպես արտահայտվելու ազատության իրավունքի բաղադրատարր, մյուս մասը (օրինակ՝ Վ. Բոյերը, Պ. Հալբերգը)՝ այն ներկայացնում են որպես արտահայտվելու ազատությունից առանձնացող և որոշակի «ինքնուրույնություն» կրող իրավունք:

ՀՀ-ում տեղեկատվության ազատության վերաբերյալ հետազոտություն իրականացնելու արդիականությունը պայմանավորվում է նաև 2015 թվականին խմբագրված ՀՀ Սահմանադրությունում տեղեկատվության ազատության նկատմամբ արտահայտվող մոտեցմամբ, ըստ որի՝ այն ներառվել է կարծիքի արտահայտման ազատության մեջ (հոդված 42): Սահմանադրի այս մոտեցումը եզակիներից է, հատկապես, որ ընդունված չէ ատենախոսությամբ հետազոտված միջազգային պայմանագրերում կամ տարբեր պետությունների մայր օրենքներում: Տեղեկատվության ազատության հետազոտման անհրաժեշտությունը կարևորվում է նաև մեկ այլ հանգամանքով. ՀՀ սահմանադրի կողմից վերջին խմբագրությամբ Սահմանադրության մեջ հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքն առանձնացված և սահմանված է այլ հոդվածով (հոդված 51): Նշվածներին կարելի է հավելել նաև 2003 թվականին ընդունված և ընդամենը մեկ անգամ փոփոխված ոլորտային՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում տեղ գտած նորմերի ու դրանց կենսագործման ոչ բավարար և տարակարծիք դրսևորումների, ինչպես նաև արտասահմանյան (առավելապես եվրոպական) և հայկական դատական պրակտիկայում ներկայացված դիրքորոշումների և դրանց համատեքստում անձի հիմնական իրավունքի ապահովման ու պաշտպանության հիմնախնդիրների վերհանման պահանջը:

Տեղեկատվության ազատության իրավունքի այժմեական կարևորության առհավատչյան նաև իրավական այնպիսի չափորոշիչների բացահայտումն է, որոնք ամրապնդում են այս իրավունքի ապահովումը: Տեղեկատվության ազատությանը վերաբերող իրավական չափորոշիչների թվում առանձնահատուկ դեր ունեն հատկապես եվրոպական իրավական չափորոշիչները: Եվրոպական իրավական միտքը դիտարկելով որպես եվրոպական իրավական զարգացման պայմաններում ձևավորված ու հաստատված ուղենիշների համակարգ՝ ուսումնասիրության առարկային վերաբերող հիմնախնդիրներն ու դրանց համար առաջարկվող իրավական լուծումների քննարկումը կանցկացնենք եվրոպական իրավական չափորոշիչների լույսի ներքո:

Այսպիսով, վերոնշյալ դիտարկումների հիման վրա կարող ենք վերահաստատել տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի

ապահովմանն ու պաշտպանությանը նվիրված հետազոտության այժմեականությունը, ինչի շնորհիվ տեղեկատվական մրցավազքի ներկա ժամանակաշրջանում անհրաժեշտ ուշադրություն կիրավիրվի մարդու համար մեծ նշանակություն ու կարևորություն ունեցող այս իրավունքին:

Հետազոտության գիտական մշակվածության աստիճանը, տեսական, իրավական ու փորձառնական հիմքերը. հայկական իրավական միտքը տեղեկատվության ազատությանը վերաբերող որոշ մեկնաբանություններ ու վերլուծություններ ներկայացրել է, սակայն դրանք դիտարկվել են մի դեպքում՝ սոսկ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքների շրջանակում ու տեսանկյունից, մյուս դեպքում, հաշվի առնելով տեղեկատվության ազատության բազմաշերտ բնույթը, տեղեկատվության ազատության տարբեր դրսևորումների շրջանակում (օրինակ՝ լրագրողների իրավունքների պաշտպանության, հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու, էկոլոգիական տեղեկատվության կամ այլ համատեքստում): Այդ հետազոտություններում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը կենտրոնական ու առանցքային ուսումնասիրման առարկա չէ, և, ըստ այդմ, չի արժանացել խորն ու համապարփակ հետազոտման: Ուստի կարող ենք արձանագրել, որ հայրենական իրավագիտության մեջ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքին վերաբերող նման համընդգրկուն հետազոտությունն առաջին փորձն է:

Հայկական իրավական ոլորտի մասնագիտական ընդհանուր, կարևոր ու նշանակալի վերլուծությունները հանդիսացել են սույն հետազոտության տեսական հիմքը, որոնց թվում կառանձնացնենք Գ. Հարությունյանի[1], Մ. Մուրադյանի և Ա. Ղամբարյանի[2], Գ. Հովհաննիսյանի[3], Վ. Այվազյանի[4], Ա. Վաղարշյանի[5] և այլոց աշխատությունները, իսկ ոլորտային սակավ հետազոտություններից կառանձնացնենք Կ. Անդրեասյանի[6], Վ. Պողոսյանի[7], Հ. Սուքիասյանի[8] և այլ գիտնականների՝ տեղեկատվության ազատությանը վերաբերող հետազոտությունները:

Հաշվի առնելով տեղեկատվության ազատությանը վերաբերող հայաստանյան

---

[1] Հարությունյան Գ., Վաղարշյան Ա., ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Ընդհանուր խմբագրությամբ, Իրավունք, Եր., 2010, 1086 էջ:

[2] Մուրադյան Մ., Ղամբարյան Ա. և այլք, Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ, 3-րդ լրամշակված հրատ., «Լուսաբաց» հրատարակչատուն, Երևան, 2018, 688 էջ:

[3] Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Եր., 2020, 448 էջ:

[4] Այվազյան Ն. և այլք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք, ԵՊՀ հրատարակչություն, 2016, Եր., 416 էջ:

[5] Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1 (դասախոսություններ), ԵՊՀ, Հեղինակային հրատարակություն, 2013, Եր., 224 էջ:

[6] Անդրեասյան Կ., Տեղեկատվական իրավունք: Ուս. ձեռնարկ, Ասողիկ, Եր., 2004, 356 էջ:

[7] Պողոսյան Վ., Մոռացվելու իրավունքը՝ որպես մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքի բաղադրատարր, Արդարադատություն ամսագիր, 2018, 20-25 էջեր:

[8] Սուքիասյան Հ., Խոսքի և մամուլի ազատության իրավական կարգավորումը Խորհրդային Հայաստանում 1920-1923թթ., «ԿԱՆԹԵՂ» Գիտական հոդվածների ժողովածու, № 4, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2017, 158-165 էջեր:

ուսումնասիրությունների փոքրաթվությունը՝ պետք է արձանագրենք, որ արտասահմանյան գիտական միտքն ավելի մեծ տեղ է զբաղեցրել սույն հետազոտության տեսական հիմքում: Դրանց թվում կնշենք ինչպես ընդհանուր մասնագիտական, օրինակ՝ Ս. Ավակյանի[1], Ե. Կազլովանի[2], Մ. Ռոզենֆելդի[3], Ջ. Ռազի[4], Հ. Քոլինսի[5], Ջ. Ելինեկի[6], Վ. Խրոպանյուկի[7] և այլոց աշխատությունները, այնպես էլ՝ հետազոտության թեմայի համար ծանրակշիռ դեր ու նշանակություն ունեցող հեղինակների՝ Վ. Բոյերի[8], Ի. Բաչիլոյի[9], Ջ. Աքերմանի[10], Ռ. Սաբայի[11], Մ. Բովենսի[12], Թ. Մենդելի[13], Պ. Հալբերգի[14], Թ. Մըքգոնագըլի[15], Դ. Չիրվանի[16] և այլոց հետազոտությունները:

Հետազոտության իրավական հիմքերի շարքում առաջնային տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային կարևորագույն այնպիսի պայմանագրեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան,

---

[1] Авакьян С.А., Конституционное право России: Учебный курс. в 2 т. - М.: Юрист, 2005, 719 с.:

[2] Козлова Е.И., Кутафин О.Е., Конституционное право России, Издание третье, переработанное и дополненное, Москва, 2001, 282 с.:

[3] Rosenfeld M., Sajó A., The Oxford Handbook of Comparative Constitutional Law, Oxford University Press, Oxford, UK, 2012, 1295 p.:

[4] Raz J., The Morality of Freedom, Oxford University Press, Oxford, UK, 1986, 446 p.:

[5] Collins H., On the (In)compatibility of Human Rights Discourse and Private Law Hugh Collins, London School of Economics and Political Science, LSE Law, Society and Economy Working Papers 7/2012, London, UK, 2012, 45 p.:

[6] Jellinek G., System der subjektiven öffentlichen Rechte, Heidelberg, Germany, 1892, 365 s.:

[7] Խրոպանյուկ Վ., թրգ.՝ Խ. Հարությունյան, Պետության և իրավունքի տեսություն (2-րդ հրատարակություն, լրացումներով, ուղղումներով), Երևանի Գիտակ համալսարան, «Գոշ» հրատարակչություն, Երևան, 1997, 344 էջ:

[8] Боер В.М., Павельева О.Г., Информационное право: учеб. пособие, Ч. 1, ГУАП., СПб., 2006, 116 с.:

[9] Бачило И.Л., Информационное право. 5-е изд., перераб. и доп., М., Издательство Юрайт, 2018, 419 с.:

[10] Ackerman J.M., Sandoval-Ballesteros I.E., The Global Explosion of Freedom of Information Laws. Administrative Law Review, Volume 58, Number 1, Washington College of Law, American University, 2006, 130 p.:

[11] Roberto S., El Derecho de la Persona a Acceder a la Información en Poder del Gobierno, 3 DERECHO COMPARADO DE LA INFORMACIÓN 45, Instituto de Investigaciones Jurídicas - Universidad Nacional Autónoma de México, 2004, 145-185 pp., https://bit.ly/3SSiil8 (29.10.2022)

[12] Bovens M., Information Rights: Citizenship in the Information Society, The Journal of Political Philosophy: Volume 10, Number 3, 2002, 317–341 pp.:

[13] Mendel T., Head of Law Program at ARTICLE 19, Freedom of Information as an Internationally Protected Human Right, ARTICLE 19, 5 էջ, https://bit.ly/3AvL96v (29.10.2022)

[14] Hallberg P., Virkkunen J., Freedom of speech and information in global perspective, Rule of Law Finland, Rolfi, Springer Nature, Helsinki, Finland, 2017, 298 p.

[15] McGonagle T., Donders Y., The United Nations and Freedom of Expression and Information, Cambridge University Press, Cambridge, United Kingdom, 2015, 534 p.

[16] Chirwa D.M., The Doctrine of State Responsibility as a Potential Means of Holding Private Actors Accountable for Human Rights, Melbourne Journal of International Law, Cape Town, South Africa, 2004, 36 p., https://bit.ly/2OepRCx (29.10.2022)

Եվրոպական միության «Մարդու հիմնարար իրավունքների մասին» խարտիան, ՄԱԿ-ի «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիան, ԵԱՀԿ Մարդկային չափանիշի խորհրդաժողովի Մոսկվայի և Կոպենհագենի խորհրդակցություններին ընդունված իրավական ակտերը, «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության կազմակերպական մարմինների ընդունած մի շարք հանձնարարականներն ու իրավական ակտերը, ինչպես նաև՝ մի շարք պետությունների սահմանադրությունները, տեղեկատվության ազատությանը վերաբերող ներքին իրավական ակտերը, ՀՀ Սահմանադրությունը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը և մի շարք այլ իրավական ակտերը:

Ատենախոսության փորձառնական հիմքերից են տարբեր դատական ատյանների իրավական դիրքորոշումները, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրոպական միության արդարադատության դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի և այլ պետությունների դատարանների կողմից ներկայացված մեկնաբանությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան. որպես հետազոտության օբյեկտ է դիտարկվել տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի պաշտպանության ու ապահովման, այդ թվում՝ ընդհանրապես տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու, ինչպես նաև հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու շուրջ առաջացող սահմանադրաիրավական հարաբերությունների ամբողջությունը: Հետազոտության առարկան են կազմում տեղեկատվության ազատության էությունն ու նշանակությունը, բովանդակությունը, դրսևորումները, եվրոպական իրավական չափորոշիչները, ընդհանուր տեղեկությունների ազատությունն ու հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքը, մամուլի ազատությունը, պետության գործունեության հրապարակայնությունն ու վերջիններիս շրջանակում՝ անձի տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովման ու պաշտպանության հիմնախնդիրները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները. հետազոտության նպատակը տեղեկատվության ազատության ժամանակակից բովանդակության ներկայացմամբ ու գիտական ուսումնասիրությամբ տեղեկություններ փնտրելու, ստանալու, տարածելու, ինչպես նաև հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքների իրացման շուրջ առաջացող հիմնախնդիրների վերհանումն է, իսկ որպես վերջիններիս ընդհանրացման արդյունք՝ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովումն ու պաշտպանությունն առավելագույնս երաշխավորող իրավական մոտեցումների բացահայտումը:

Հետազոտության վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

– վեր հանել տեղեկատվության ազատության ծագումն ու զարգացումը՝ ի բացահայտումն դրա նշանակության,

– ներկայացնելով տեղեկատվության ազատության տեսաիրավական հիմքերը՝ բացահայտել՝

ա) տեղեկատվության ազատության էությունն ու մասնահատկությունը՝ լայն և նեղ իմաստներով,

բ) իրավունքի ապահովման կապակցությամբ պետության համար առաջացող պարտականությունների (հանրային մարմնին ուղղված պահանջների) շրջանակն ու դրանց առանձնահատկությունները,

գ) տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի «ազատություն» և «իրավունք» ասպեկտները,

դ) եվրոպական իրավական չափորոշիչների բնույթը,

– վերլուծել տեղեկատվության ազատության հայկական սահմանադրական նորմը՝ դիտարկելով այս իրավունքի տեղը մարդու հիմնական իրավունքների համակարգում, համեմատելով դրա հետ կապվող այլ իրավունքները և ներկայացնելով դրա հնարավոր տեսակները (ընդհանուր տեղեկատվության ազատություն և հատուկ տեղեկատվության ազատություն),

– պարզել ընդհանուր տեղեկություններ փնտրելու, ստանալու ու տարածելու ազատությունների ապահովման սահմանադրահիրավական երաշխիքները, պաշտպանության շրջանակը, անդրադառնալ դրա բաղադրիչներ հանդիսացող մասնավոր և հանրային լրատվական միջոցների ազատությունների ներպետական ու եվրոպական իրավական երաշխիքներին՝ ընդգծելով դրանց ապահովման ճանապարհին ձևավորված հիմնախնդիրները,

– ներկայացնել ընդհանուր տեղեկատվության ազատության պաշտպանության համար հնարավոր վտանգ ներկայացնող ժամանակակից իրավունքներից՝ մոռացված լինելու իրավունքը և բացահայտել դրա ու քննարկվող իրավունքի մրցակցությունը,

– եվրոպական և միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում քննարկել հատուկ (հանրային մարմինների մոտ գտնվող) տեղեկատվության ազատության ինքնահատկությունը՝ վեր հանելով դրա դրսևորումներ հանդիսացող հանրային մարմիններից տեղեկություն ստանալու ու տեղեկացված լինելու իրավունքների ապահովման հիմնախնդիրները,

– հետազոտել մասնավոր մարմինների մոտ գտնվող տեղեկություններն ստանալու իրավունքը ու դրա շրջանակում վեր հանել մասնավոր մարմինների՝ տեղեկություն տրամադրելու հնարավոր պարտականությունների շրջանակը:

Հետազոտության մեթոդական հիմքը. հետազոտման ընթացքում կիրարկվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ մասնագիտական մեթոդներ: Դրանց առաջին խմբին են դասվել ընդհանուր վերլուծության ու համադրման, վերացարկման, պատմական, դիալեկտիկական մեթոդները, իսկ

երկրորդ խմբի մեթոդներից են հանդիսացել ձևական իրավաբանական, իրավահամեմատական, լեզվատրամաբանական մեկնաբանման մեթոդները:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը. սույն հետազոտությունն իր բնույթով տեղեկատվության ազատության հիմնական իրավունքին նվիրված հայրենական առաջին համընդգրկուն աշխատությունն է, որտեղ քննարկվող իրավունքը ներկայացվում է որպես անձի ինքնուրույն իրավունք՝ ներառելով ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ տեղեկությունների ազատությունը: Սրա կարևորությունն ավելի ընդգծվեց հատկապես ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով որդեգրած մոտեցումներով, մասնավորապես՝ տեղեկատվության ազատությունն ամրագրվեց երկու առանձին հոդվածներով, ինչը իրավակարգավորման նոր չափանիշներ է առաջադրել՝ առաջացնելով դրանց և՛ համալիր, և՛ մասնավոր հարցադրումներով հետազոտման պահանջը:

Տեղեկատվության ազատության ապահովմանն ու պաշտպանությանն ուղղված սույն հետազոտությամբ, ըստ էության, ներկայացվել է որպես ինքնուրույն իրավունք հանդես եկող տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի երկու առանձին դրսևորումների՝ ընդհանուր և հատուկ տեղեկատվության ազատությունների ձևավորումը: Դրանցից երկրորդին (հատուկ՝ հանրային մարմինների մոտ գտնվող տեղեկությունների ազատությանը) վաղուց «հաջողվել էր» առանձնանալ, իսկ առաջինի «առանձնացումը» փորձ է արվել հաստատել ատենախոսությամբ:

Հստակեցվել է տեղեկատվության ազատության շրջանակում անձի պահանջների ու դրանց ապահովման շրջանակում պետության ստանձնած պարտականությունների ամբողջությունը: Առաջին անգամ ներկայացվել է հայկական իրավական մտքի պատմությունում տեղեկատվության ազատության ունեցած դերն ու զարգացումը, ՀՀ Սահմանադրությամբ որդեգրած՝ կարծիքի արտահայտման ազատության ու տեղեկատվության ազատության հարաբերակցությունը, ընդհանուր տեղեկատվության ազատությունն ու հատուկ տեղեկատվության ազատությունը, տեղեկատվության ազատության ու ժամանակակից իրավունքներից՝ մոռացված լինելու իրավունքի մրցակցությունը, հատուկ՝ հանրային մարմինների մոտ գտնվող տեղեկությունների ազատության երկու դրսևորումները՝ տեղեկություն ստանալու և տեղեկացված լինելու իրավունքները, ինչպես նաև մասնավոր մարմիններից տեղեկություն ստանալու իրավահարաբերությունների վերաբերող հիմնահարցերը:

Ատենախոսության գիտական նորույթն իր արտահայտությունն է գտել նաև **պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում.**

1. Ատենախոսությամբ հաստատվել է տեղեկատվության ազատության՝ որպես մարդու առանձին հիմնական իրավունքի համընդգրկուն հասկացությունը՝ լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով՝ տեղեկատվության ազատությունը հանդիսանում է ժողովրդավարության կայացման անբաժան մաս և ապահովում է պետության բաց կառավարումը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

Նեղ իմաստով դիտարկելիս՝ տեղեկատվության ազատությունը կոնկրետ տեղեկության ազատ փնտրումը, ստացումն ու տարածումը, մասնավոր ու հանրային տեղեկատվական միջոցների ազատությունը և հանրային մարմիններից տեղեկությունների ստացման գործընթացներն ապահովող իրավունք է:

2. Ատենախոսությամբ հաստատվել է, որ հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքը համապատասխանում է իրավագետ Գ. Ելինեկի առաջ քաշած «status activus» ստատուտների ուսմունքին: Մինչդեռ, հաշվի առնելով, որ «status activus» գործառույթը պայմանավորվում է ժողովրդավարական պետությունում քաղաքացու ունեցած դերի ընդգծմամբ, ինչպես նաև հանրային կառավարմանը անհատի մասնակցության ապահովմամբ, պետության մեջ քաղաքացու ազատության, քաղաքական կամքի ձևավորմամբ, կարծում ենք՝ որպես «status activus» բնույթն ունեցող հիմնական իրավունքների կրողներ (սուբյեկտներ) պետք է հանդիսանան միայն տվյալ պետության քաղաքացիները: Ըստ այդմ էլ, առաջարկում ենք հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 51) նախատեսել միայն ՀՀ քաղաքացիների համար:

3. Սահմանադրի այն մոտեցումը, համաձայն որի՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը ներառված է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի մեջ, եզակի է և ճանաչված չէ միջազգային կարևորագույն պայմանագրերով ու արտասահմանյան սահմանադրություններով: Կարծիք ունենալու, գնահատողական դատողություն հանդիսացող կարծիք-գաղափարի և տեղեկատվության (լուր, տվյալ, փաստ) ազատությունների տարբերությունների բացահայտմամբ հիմնավորում ենք, որ կարծիք չհանդիսացող այլ տեղեկությունների (լուր, տվյալ, փաստ) ազատությունը երաշխավորող տեղեկատվության ազատությունը չի ներառվում ՀՀ Սահմանադրության ձևակերպած կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի մեջ: Արդյունքում հիմնավորվում է տեղեկատվության ազատությունն առանձին իրավունք դիտարկելու անհրաժեշտությունը:

4. Կարևորելով տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի բազմաբովանդակ բնույթը, ինչպես նաև հաշվի առնելով քննարկվող իրավունքի նկատմամբ ՀՀ Սահմանադրության, այլ պետությունների սահմանադրությունների որդեգրած մոտեցումները՝ ատենախոսությամբ հաստատվել է տեղեկատվության ազատության երկու տեսակ՝ *ընդհանուր տեղեկատվության ազատություն* (այսուհետ նաև՝ ԸՏԱ), որն ապահովում է տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը (ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված), և *հատուկ տեղեկատվության ազատություն* (այսուհետ նաև՝ ՀՏԱ), որն ապահովում է հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքը (ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդված):

5. Հաստատելով ՀՀ իրավական համակարգում մոռացված լինելու հիմնական իրավունքի գոյությունը՝ բացահայտվեց, որ այս իրավունքը ծագում է

անձի վերաբերյալ հանրային մարմինների մոտ գտնվող տվյալների մշակման իրավական հիմքերի կորստով (ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդված, մաս 3-րդ): Մոռացված լինելու հիմնական իրավունքի ու ընդհանուր տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի մրցակցության քննարկմամբ հիմնավորվեց, որ մոռացված լինելու հիմնական իրավունքի ծագման իրավական հիմքերը չպետք է վտանգեն ընդհանուր տեղեկատվության ազատության ապահովումը, ուստի պետք է համապատասխանեն վերջինիս իրավաչափ սահմանափակումներին: Հակառակ պարագայում կվնասվի տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը:

6. Ի հայտ բերելով տեղեկատվության ազատության զարգացման նպատակով ձևավորված միջազգային և եվրոպական մի շարք սկզբունք-չափորոշիչներ, դրանք համադրելով ՀՀ-ում և արտասահմանյան երկրներում գործող իրավակարգավորումների հետ՝ հաստատում ենք, որ հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու և տեղեկացված լինելու հիմնական իրավունքն ամբողջությամբ կապահովվի հետևյալ չափորոշիչների առկայության պայմաններում.

ա) առավելագույն թափանցիկություն. տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը պետք է առաջնորդվի առավելագույնը բացահայտելու սկզբունքով,

բ) հրապարակման պարտավորություն. հանրային մարմինները պարտավոր են պրոակտիվ կերպով (առանց պահանջի) հրապարակել հանրության համար կարևոր տեղեկությունները,

գ) բաց նիստեր. հանրային մարմինների նիստերը պետք է հնարավորինս բաց լինեն հանրության համար,

դ) տեղեկատվության մատչելիությունն ապահովող գործընթացների նախատեսում. տեղեկություն ստանալու համար ներկայացված դիմումները պետք է քննվեն արագ և բարեխիղճ կերպով,

ե) բողոքարկում. տեղեկատվության տրամադրման յուրաքանչյուր մերժում պետք է ենթակա լինի բողոքարկման, ընդ որում՝ բողոքարկման ժամկետները չպետք է վնասեն պահանջվող տեղեկության անհրաժեշտությանը,

զ) սահմանափակում. տեղեկատվության ազատության սահմանափակման համար պետք է առկա լինի սահմանափակման հիմքերի որոշակի և սպառիչ ցանկ:

7. ԸՏԱ և ՀՏԱ սահմանադրաիրավական նորմերի (42-րդ և 51-րդ հոդվածներ) մրցակցությունը ներկայացնելիս հիմնավորում ենք, որ հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավահարաբերությունների դեպքում կիրառվում է ՀՏԱ-ն՝ 51-րդ հոդվածը, այդ թվում՝ տվյալ հոդվածով նախատեսված սահմանափակումներով: Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ պետական անվտանգության պաշտպանությունը չի հանդիսանում հատուկ տեղեկատվության ազատության սահմանափակման հիմք, մինչդեռ, արձանագրվել է, որ պետական և տեղական մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկությունները կարող

են անմիջականորեն կապված լինել պետական անվտանգության պաշտպանության հետ, որոնց հրապարակումը հնարավոր վնաս կհասցնի պետական անվտանգության պաշտպանությանը: Հիմք ընդունելով վերջինս՝ ատենախոսությամբ հիմնավորվեց պետական անվտանգության պաշտպանության նպատակով հատուկ տեղեկատվության ազատության իրավաչափ սահմանափակում նախատեսելու անհրաժեշտությունը:

Ատենախոսության գիտատեսական և գործնական նշանակությունը. հետազոտության գիտատեսական նշանակությունը կայանում է տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի վերաբերյալ առանձին ու ամբողջական ուսումնասիրության շնորհիվ այս իրավունքի համալիր ու համընդհանուր ներկայացմամբ, ինչը տեղեկատվական հոսքերի առատության ժամանակակից աշխարհում հնարավորություն կտա համաժամանակյա իրավական գնահատական տալ դրա կապակցությամբ անձի տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովման ու պաշտպանության հարցերին: Հետազոտությամբ արծարծված հիմնախնդիրները, դրանց լուծմանն ուղղված արդյունքները, ինչպես նաև առաջ քաշված նոր մոտեցումները կարող են նպաստել տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի վերաբերյալ հետագա հետազոտությունների արդյունավետության մեծացմանը, ինչպես նաև դրա շրջանակում առաջացած իրավական խնդիրների լուծմանը: Տեղեկատվության ազատությանը վերաբերող ուսումնասիրության գիտատեսական նշանակությունն ավելի բարձր է հատկապես հայրենական իրավունքում, որտեղ քննարկման առարկա հիմնական իրավունքը դեռևս չի արժանացել պատշաճ ուշադրության:

Ատենախոսության թեմայի գործնական նշանակությունը պայմանավորված է քննարկվող իրավունքի ապահովման ու պաշտպանության կապակցությամբ պրակտիկայում առաջացող խնդիրների վերհանմամբ և դրանց որոշակի լուծմանն ուղղված առաջարկների ներկայացմամբ, որոնք, հուսանք, իրենց օժանդակությունը կունենան այս հիմնական իրավունքի երաշխավորման գործում:

Հետազոտության արդյունքների ներդրումն ու փորձարկումը. ատենախոսությունը պատրաստվել է Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Իրավագիտության ամբիոնում: Ատենախոսական աշխատության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հոդվածներում, ինչպես նաև զեկուցման տեսքով ներկայացվել են տարբեր գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածը. ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ութ ենթագլուխներ ներառող երեք գլուխներից, եզրակացությունից ու օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, տեսական, իրավական ու փորձառնական հիմքերը, օբյեկտն ու առարկան, հետազոտությանն առաջադրված նպատակն ու խնդիրները, օգտագործված մեթոդական հիմքը, գիտական նորույթը (այդ թվում՝ պաշտպանության ներկայացվող դրույթները), գիտատեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների ներդրումն ու փորձարկումը:

Ատենախոսական աշխատանքի առաջին՝ «**Տեղեկատվության ազատության՝ որպես մարդու հիմնական իրավունքի էությունը, ապահովման սահմանադրաիրավական հիմքերն ու առանձնահատկությունները**» վերտառությամբ գլխում ներկայացվում է տեղեկատվության ազատության՝ որպես մարդու առանձին հիմնական իրավունքի ընդհանուր իրավական նշանակությունն ու բնույթը:

Առաջին գլխի առաջին ենթագլխում, որը վերնագրված է «**Տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ծագումն ու զարգացումը**», ներկայացված է նախ՝ տեղեկության՝ որպես մարդու կյանքում կարևորագույն տեղ զբաղեցնող արժեքի զարգացման պատմությունն ու հեղափոխությունները, մարդկության պատմության մեջ տեղեկատվության ազատության տարբեր դրսևորումների ծագումն ու զարգացումը՝ հռոմեական իրավունքից մինչև ժամանակակից աշխարհ: Վերջինիս շրջանակում ներկայացվում է նաև հայկական իրավական մտքի պատմության մեջ տեղեկատվության ազատության զարգացումը:

«**Տեղեկատվության ազատությունը՝ որպես մարդու հիմնական իրավունք. տեսաիրավական հիմքերը, առանձնահատկություններն ու եվրոպական իրավական չափորոշիչները**» վերտառությամբ երկրորդ ենթագլխում վեր է հանվում տեղեկատվության ազատությանը վերաբերող հայկական ու արտասահմանյան տեսաիրավական մոտեցումները, դրանց համադրմամբ ներկայացվում այս իրավունքի համընդգրկուն հասկացությունը՝ լայն և նեղ իմաստներով, առանձնացվում է ինչպես տեղեկատվության ազատության պաշտպանության համար պետությանը ներկայացվող պահանջ-իրավունքների շրջանակը, այնպես էլ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի «ազատություն» և «իրավունք» տարրերը: Անդրադարձ է կատարվում նաև եվրոպական իրավական չափորոշիչների բնութագրին:

Այս գլխի վերջին՝ «**Կարծիքի արտահայտման ազատության և տեղեկատվության ազատության հարաբերակցությունը ՀՀ Սահմանադրությունում. ընդհանուր տեղեկատվության ազատություն և հատուկ տեղեկատվության ազատություն**» վերնագրված ենթագլխում վերլուծվում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի բաղադրատարրեր հանդիսացող սեփական կարծիք ունենալու ազատության, տեղեկատվության

ազատության և գաղափարների ազատության նշանակությունն ու հարաբերակցությունը: ՀՀ Սահմանադրության և այլ պետությունների մայր օրենքների ուսումնասիրության հիման վրա ներկայացվում է տեղեկատվության ազատության երկու բաղադրատարրեր՝ ընդհանուր տեղեկատվության ազատություն ու հատուկ տեղեկատվության ազատություն:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «**Ընդհանուր տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները»:**

Այս գլխի առաջին ենթագլուխն ունի «**Ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանադրաիրավական երաշխիքներն ու առանձնահատկությունները»** վերնագիրը, որում վերհանվել ու քննարկվել է տեղեկատվության որևէ միջոցով ցանկացած տեղեկության փնտրման, ստացման ու տարածման ազատությունն ապահովող ԸՏԱ-ի (ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված) սահմանադրաիրավական կարևոր երաշխիքները: Ներկայացվել է նաև ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանափակման որոշ հարցեր:

«ՀՀ-ում ընդհանուր տեղեկատվության ազատության պաշտպանության շրջանակն ու եվրոպական իրավական չափորոշիչները» վերնագրով երկրորդ ենթագլխում քննարկվում է ԸՏԱ-ի շրջանակում պետության համար առաջացող պարտավորությունների ամբողջությունը՝ տեղեկատվական միջոցների ազատության, տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեության երաշխավորման, այդ թվում՝ գրաքննության արգելքի, ԶԼՄ-ների անկախության ու անվտանգության, տեղեկատվության աղբյուրի պաշտպանության հիմնահարցերը: Վերջիններս ուսումնասիրվում են եվրոպական արդարադատական նշանակալի դիրքորոշումների ներկայացմամբ:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը կրում է **«Մոռացված լինելու իրավունքի և ընդհանուր տեղեկատվության ազատության մրցակցությունը ՀՀ-ում»** վերնագիրը, որը ներկայացնում է որևէ տեղեկատվական միջոցով տեղեկությունների ազատ շրջանառման համար ժամանակակից «սպառնալիք» հանդիսացող իրավունքներից մեկը՝ ոչ բավարար կերպով ուսումնասիրված ու կարգավորված, բայց մեծ տարածում ստացող մոռացված լինելու իրավունքը, դրա դրսևորումն արտասահմանում և ՀՀ-ում: Այս ենթագլխում վերլուծվում է մոռացված լինելու նոր իրավունքի ու ԸՏԱ-ի հնարավոր հարաբերակցության և մրցակցության իրավաչափ շրջանակը:

Ատենախոսության երրորդ գլուխը վերտառված է **«Հատուկ տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության ժամանակակից հիմնախնդիրները»:**

Վերջին գլխի առաջին ենթագլուխն է հանդիսանում **«Հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքի և տեղեկացված լինելու իրավունքի ապահովումը միջազգային ու եվրոպական չափորոշիչների լույսի**

ներքո», որտեղ քննարկվել է ՀՏԱ-ն (ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդված)՝ հանրային մարմիններից տեղեկություն ստանալու իրավունքը: Այս իրավունքից առանձնացվել է նաև տեղեկացված լինելու իրավունքը, որը դրսևորվում է պրոակտիվ (անկախ որևէ պահանջի) տեղեկություններ հրապարակելու պետության պարտականությամբ: Ենթագլուխը ձևավորված է առավելապես եվրոպական և միջազգային չափորոշիչների, սկզբունքների հիման վրա: Վերջիններիս ու ՀՀ իրավական համակարգի իրավահամեմատության շնորհիվ վեր են հանվում մի շարք իրավական խնդիրներ և առաջադրվում դրանց լուծման հնարավոր իրավական մոտեցումներ:

Հետազոտության երրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը կրել է **«Մասնավոր մարմինների նկատմամբ հատուկ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի կիրարկման իրավական սահմանները»** վերնագիրը, քննարկման առարկա է դարձել հանրային մարմնից բացի նաև մասնավոր մարմինների մոտ գտնվող տեղեկությունների ստացման իրավական հնարավորությունը, ներկայացվել է տեղեկության տրամադրման պարտականություն ունեցող մասնավոր մարմինների կազմը, քննարկման հարցի շրջանակում իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ապահովելու նպատակով փաստաբանների դերի բարձրացման որոշ հարցեր և այլն:

Եզրակացությունում ամփոփ շարադրված են ատենախոսական հետազոտության հիմնական արդյունքների հիման վրա ձևավորված եզրահանգումները, որոնք ներկայացվում են ստորև.

1. Տեղեկատվության ազատության իրավունքի պատմական զարգացման անդրադարձը ցույց տվեց, որ տեսությունում դրա զարգացումը կապվում է առավելապես տեղեկույթի ստեղծման ու տարածման եղանակների (բանավոր, թղթային, էլեկտրոնային) առաջընթացով: Միևնույն ժամանակ, դրանից բացի, մեր կողմից ներկայացվեց տեղեկատվության ազատության բուն՝ որպես մարդու իրավունք լինելու տեսանկյունը, ինչից պարզ դարձավ, որ այս իրավունքը սկզբնապես ձևավորվել է հանրային իշխանության հրապարակայնության ապահովման համատեքստում (դեռևս հռոմեական իրավունքից), հետագայում դրսևորվել որպես մամուլի ազատությունը երաշխավորող իրավունք (սկզբնավորվել է Շվեդիայում 1766 թվականին ընդունված «Մամուլի ազատության մասին» ակտով), իսկ այժմ միջազգային ճանաչում ստացած և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ փոփոխվող այս իրավունքը դարձել է ցանկացած տեղեկության փնտրման, ստացման ու տարածման, ինչպես նաև հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքները երաշխավորող մարդու հիմնական իրավունք:

Հայկական իրավական մտքի պատմությունում տեղեկատվության ազատության ունեցած դերին վերաբերող անդրադարձը ցույց տվեց, որ այն ամբողջությամբ ճանաչվել ու պաշտպանվել է միայն հայկական երրորդ հանրապետության օրոք:

2. Տեսական մի շարք մոտեցումներ եկան ապացուցելու, որ տեղեկատվության ազատությունը մի կողմից՝ ընդհանրական առումով ժողովրդավարական պետության կայացման նախապայմաններից մեկն է, մյուս կողմից՝ տեղեկությունների ազատ շրջանառությունը երաշխավորող անձի հիմնական իրավունք:

Ամփոփելով տեղեկատվության ազատության կապակցությամբ հիմնական իրավունքի հասցեատեր հանդիսացող պետության պարտականությունները՝ արձանագրեցինք, որ ՀՀ-ում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովումն իրականացվում է անձի հետևյալ պահանջների շրջանակներում.

- յուրաքանչյուրի իրավունքն է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել չմիջամտել տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու, ինչպես նաև մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությանը,
- յուրաքանչյուրի իրավունքն է պետությունից պահանջել ստեղծել տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող հանրային հեռուստատեսություն և ռադիո ու ապահովել դրանց գործունեության անկախությունը,
- յուրաքանչյուրի իրավունքն է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել տրամադրել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ:

Ատենախոսությամբ կատարված հետազոտությամբ վերահաստատվեց, որ տեղեկատվության ազատությունը հանդիսանում է ինչպես *ազատություն*՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելը, ստանալը և տարածելը, ինչպես նաև մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության ու տեղեկատվական այլ միջոցների ազատությանը հանրային մարմինների չմիջամտելը նախասահմանված լինելու իմաստով, այնպես էլ *իրավունք*՝ անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկությունների տրամադրումն ապահովելու՝ հանրային մարմիններին ուղղված պահանջ ներկայացնելու իմաստով: Այսպիսով՝ տեղեկատվության ազատությունը և՛ իրավունք է, և՛ ազատություն:

Ամփոփելով տեսական մոտեցումների և դատական պրակտիկայի ուսումնասիրման արդյունքները՝ եզրակացնում ենք, որ տեղեկատվության ազատությանը վերաբերող եվրոպական իրավական չափորոշիչները կարող են բնութագրվել որպես եվրոպական իրավական զարգացման պայմաններում եվրոպական իրավական աղբյուրներում, այդ թվում՝ եվրոպական արդարադատական մարմինների դատական պրակտիկայում ձևավորված ու հաստատված, տեղեկություններ փնտրելու, ստանալու ու տարածելու, հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու ազատություններին վերաբերող

ուղենիշների համակարգ, որոնք նպաստում են եվրոպական իրավական հիմնարար սկզբունքները կրող իրավական համակարգերում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովման ու պաշտպանության համաժամանակյա զարգացմանը:

3. Վերլուծելով ՀՀ Սահմանադրության ձևակերպած կարծիքի արտահայտման ազատության հոդվածը (հոդված 42)՝ արձանագրեցինք, որ այն իր մեջ ներառում է սեփական կարծիք ունենալու ազատությունը, տեղեկատվության ազատությունը և գաղափարների ազատությունը: Փաստեցինք, որ դրանք հանդիսանում են մարդու առանձին իրավունքներ, որոնք ունեն հստակ տարբերություններ ու առանձնահատկություններ:

Կարծիքի արտահայտման ազատության մեջ ներառվող իրավունքների առանձին ուսումնասիրության արդյունքում դրանց վերաբերող մի քանի խնդիրներ արձանագրեցինք, այդ թվում՝ սահմանափակման ոչ ենթակա՝ կարծիք ունենալու ազատության նկատմամբ ՀՀ Սահմանադրությամբ սահմանափակման հիմքեր նախատեսված լինելը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի բնօրինակում արտահայտվելու ազատության նորմի (հոդված 19) և նշված Հռչակագրի հայկական պաշտոնական թարգմանության միջև առկա անհամապատասխանություն ու դրա (հայկական պաշտոնական թարգմանության) ենթադրյալ արտացոլումը մայր օրենքի քննարկվող հոդվածի ձևակերպման մեջ, կարծիք չհանդիսացող ցանկացած այլ տեղեկությունների ազատության ապահովման բաց և այլն:

Միաժամանակ, մի շարք պետությունների մայր օրենքների համապատասխան նորմերի ուսումնասիրության հիման վրա առանձնացրինք տեղեկատվության ազատության ու դրա հնարավոր դրսևորումների վերաբերյալ սահմանադիրների մոտեցման երեք մոդել, որոնցով ուրվագծվեցին տեղեկատվության ազատության որոշակի դրսևորումներ:

4. Մանրամասնելով ընդհանուր տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի երաշխիքները և տեսական մոտեցումներում դրանց անդրադարձը՝ պարզ դարձավ, որ տեսությունում առկա է դիրքորոշում, ըստ որի՝ արտահայտվելու ազատությունը՝ ի դեմս ընդհանուր տեղեկատվության ազատության, պատկանում է «լսարանին», այլ ոչ թե «բանախոսին»: Կարծում ենք, որ նման մոտեցմամբ խախտվում է ընդհանուր տեղեկատվության ազատության դրսևորման երեք ձևերի՝ տեղեկություն փնտրելու, ստանալու և տարածելու հավասարությունը՝ դրանցում առավելություն տալով տեղեկություն ստանալու ազատությանը, ինչը, միանշանակ, խաթարում է քննարկվող իրավունքի բուն էությունը:

Ներկայացնելով ԸՏԱ հիմնական իրավունքի սահմանադրաիրավական երաշխիքները՝ եզրակացրինք, որ հիմնական իրավունքի հասցեատերը հանդիսացող պետությունը չի կարող ամբողջությամբ ապահովել ԸՏԱ սահմանադրաիրավական երաշխիքների թվում կարևոր տեղ զբաղեցնող և ՀՀ Սահմանադրության մեջ միայն կարծիքի արտահայտման ազատությունը

երաշխավորող «անկախ պետական սահմաններից» երաշխիքը, քանի որ պետության համար իր իրավազորության տակ գտնվող պետական սահմաններից անդին այս իրավունքի ապահովումը հնարավոր խնդիրներ կարող է առաջացնել: Մասնավորապես, պետությունը չի կարող ամբողջովին ապահովել քննարկվող հիմնական իրավունքի առանց պետական սահմանների երաշխավորումը, քանի որ ցանկացած պետություն իր պետական սահմաններից դուրս, ըստ էության, որևէ իրավազորություն չունի, ուստի չի կարող իր իրավազորության ներքո գտնվող անձանց համար ապահովել իր պետական սահմաններից դուրս գտնվող աղբյուրների ամբողջական հասանելիությունը: Դրանք կարող են սահմանափակվել հենց այլ պետությունների կողմից: Ուստի, կարծում ենք, որ նշված երաշխիքն ավելի շատ միջազգային իրավական բնույթ ունի ու ներպետական մայր օրենքով դրա նախատեսումը նպատակահարմար չէ ու ավելորդ է, մյուս կողմից՝ ԸՏԱ-ի մյուս՝ «տեղեկատվության որևէ (*պետության սահմանների ներսում կամ դրսում*) միջոցով» երաշխիքն իր էությամբ կարող է ամբողջությամբ փոխարինել խնդրահարույց երաշխիքին:

Ընդհանուր տեղեկատվության ազատության ինքնահատկությունը մատնանշելու համար դրա ու կարծիքի արտահայտման ազատության հարաբերակցությունը ներկայացվեց փաստի ու գնահատողական դատողության համատեքստում, որով հստակ ընդգծվեց այս երկու իրավունքների տարբերություններն ու ընդհանուր տեղեկատվության ազատության իրավունքի նշանակությունը:

ԸՏԱ-ի բաղկացուցիչների՝ հանրային և մասնավոր տեղեկատվական միջոցների ազատությունը երաշխավորված է ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ եվրոպական մի շարք իրավական փաստաթղթերով, ՄԻԵԴ-ի դատական ակտերով, որոնց ուսումնասիրության շնորհիվ առանձնացրինք լրատվական միջոցների անկախության հետևյալ երաշխիքները՝ գրաքննության արգելքը, լրագրողի մասնագիտական գործունեության նկատմամբ հարկադրանքի արգելքը, տեղեկատվության աղբյուրի պաշտպանությունը և այլն, ինչպես նաև արձանագրեցինք, որ պետությունն այստեղ չպետք է սահմանափակվի միայն մի քանի երաշխիք հռչակելով, այլ պետք է նախաձեռնի գործուն իրավական միջոցառումներ:

Հնարավոր եղավ վեր հանել նաև ՀՀ-ում ԸՏԱ-ի ապահովման ու պաշտպանության որոշ խնդիրներ, որոնք վտանգի տակ կարող են դնել ՁԼՄ-ների, լրագրողների մասնագիտական ազատությունը, հետևաբար և՝ անձի հավաստի տեղեկություն ստանալու իրավունքը: Այդ շրջանակում փաստեցինք քննարկվող իրավունքի երաշխիքներից գլխավորի՝ գրաքննության արգելքի լայն (նախնականից նաև հետագա վերահսկման արգելքի) մեկնաբանման անհրաժեշտությունը, իսկ լրագրողների իրավունքների պաշտպանության ոլորտում ներպետական օրենսդրության ուսումնասիրությամբ պարզեցինք, որ լրագրողների օրինական գործունեության պաշտպանությունը ՀՀ-ում առավելապես կապված է ընտրական գործընթացների հետ:

5. Ժամանակակից աշխարհում տեղեկատվության ազատության ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում առաջանում են նոր իրավունքներ, որոնցից արժանի համարեցինք անդրադառնալ մոռացված լինելու իրավունքին: Այս իրավունքը կարելի է ներկայացնել որպես անձնական տվյալների պաշտպանությունից ածանցվող իրավունք: Այս իրավունքի զարգացմանը զուգահեռ պետք է հակակշռվի այլ իրավունքների, տվյալ դեպքում՝ տեղեկատվության ազատության երաշխավորումը:

ՀՀ Սահմանադրության՝ անձնական տվյալների պաշտպանության նորմի վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՀ մայր օրենքը ճանաչում է մոռացված լինելու իրավունքը: Իսկ ՀՀ օրենսդրության ուսումնասիրությամբ պարզվեց, որ այնտեղ կան իրավակարգավորումներ, որոնք որոշակիորեն մեկնաբանելու միջոցով կարելի է հասնել մոռացված լինելու իրավունքով հետապնդվող նպատակին:

6. Հատուկ տեղեկատվության ազատության առանձնահատկությունները ներկայացնելիս, նախ և առաջ, հաստատեցինք, որ այն ներկայումս հանդես է գալիս երկու դրսևորմամբ՝ հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու իրավունքով և տեղեկացված լինելու իրավունքով:

ՀՏԱ-ի բաղկացուցիչ երկու իրավունքները ներկայացվեցին եվրոպական և միջազգային մի շարք կարևոր ու էական չափորոշիչների և սկզբունքների համատեքստում: Դրա շնորհիվ բացահայտվեց ՀՀ-ում հատուկ տեղեկատվության ազատության ապահովման ու պաշտպանության մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման համար առանձնացրինք մի քանի եզրահանգումներ: Դրանցից են՝

- անհրաժեշտ է ստեղծել հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու հարաբերությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող պրոֆեսիոնալ հատուկ մարմին,

- հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությամբ հանրային մարմնից տեղեկություն ստանալը կարող է մերժվել զուտ դիմումատուի անուն-ազգանունը նշված չլինելու հիմքով, իսկ որոշ դեպքերում դիմողի անուն-ազգանունը կամ այլ տվյալը որևէ կերպ կապված չէ և չի կարող խոչընդոտել հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրմանը՝ ընդգծեցինք տեղեկություն ստանալու համար անանուն դիմում ներկայացնելու հնարավորություն նախատեսելու անհրաժեշտությունը,

- հիմք ընդունելով պետության միասնականության հատկանիշը՝ պետությանը պետք է դիտարկել հատուկ տեղեկատվության ազատության մեկ միասնական հասցեատեր, ըստ որի՝ պահանջվող տեղեկությունը չտնօրինող հանրային մարմինը դրա պահանջման դիմումն ինքը պետք է ուղարկի տվյալ տեղեկությունը տնօրինող հանրային մարմնին,

- հաշվի առնելով պահանջվող տեղեկության «շուտ փչացող ապրանք» լինելը, ինչպես նաև դրա շուրջ առաջացող վեճերի լուծման միակ՝ դատական համակարգի գերծանրաբեռնվածությունը՝ անհրաժեշտ է նախատեսել դրանց լուծման արտադատական կարգեր կամ համապատասխան դատավարական օրենսդրությունում սահմանել տվյալ վեճերի քննության արագացված ընթացակարգեր:

Տեղեկացված լինելու իրավունքին անդրադառնալիս նկատեցինք, որ պետության համար առաջնային պետք է համարվի հատուկ նշանակություն ունեցող տեղեկությունների (օր՝ բնապահպանական, անվտանգային և այլն) մասին անձանց իրազեկվածության ապահովումը, միաժամանակ կարևորեցինք պրոակտիվ կերպով (առանց պահանջի) հրապարակվող տեղեկությունների շրջանակի ավելացումը՝ ըստ հասարակության պահանջմունքների, որն ավելի կընդգծի պետության գործունեության թափանցիկությունն ու, ըստ այդմ՝ կամրապնդի ժողովրդավարությունը:

Ամբողջացնելով հատուկ տեղեկատվության ազատության սահմանափակման հիմքերի վերաբերյալ անդրադարձը՝ մատնանշեցինք տեղեկության տրամադրման չպատճառաբանված մերժումներով (դրանց առկայությունն են վկայում մի շարք դատական գործեր) անձի տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի անհիմն խախտումը: Վերջինիս որոշակի լուծումը համարեցինք տեղեկությունների տրամադրումը մերժելու որոշումների պատճառաբանության բարձրացման օրենսդրական պահանջ նախատեսելը:

7. Ամփոփելով մասնավոր մարմինների կողմից տեղեկություններ տրամադրելու պարտականությանը վերաբերող ուսումնասիրությունը՝ կարևոր ենք համարում նշել, որ ժամանակակից աշխարհում մասնավոր մարմինները մարդու կյանքում շարունակաբար ավելի մեծ դեր են կատարում, որն էլ առաջացնում է դրանց մոտ գտնվող տեղեկությունների ստացման բնական պահանջ: Հենց այս պահանջի բավարարման նպատակով մի շարք տեսական մոտեցումներ ընդգծում են մասնավոր մարմինների կողմից տեղեկությունների տրամադրման ժամանակակից անհրաժեշտությունը:

Նկատեցինք, որ ի դեմս հանրային նշանակության կազմակերպությունների՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանել է առանձնակի գործունեությամբ զբաղվող մասնավոր մարմինների համար տեղեկության տրամադրման պարտականություն, մինչդեռ նշեցինք, որ անհրաժեշտ է որոշակի կերպով ընդլայնել տվյալ մասնավոր մարմինների շրջանակը՝ հիմք ընդունելով «Պաշտոնական փաստաթղթեր մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

Ինչպես տեսանք, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բացի ՀՀ օրենսդրությունը այլ մասնավոր մարմինների (օրինակ՝ առևտրային բանկ, կուսակցություն, ՀԿ) համար նախատեսել է հատուկ՝ օրենքով նախատեսված որոշակի տեղեկությունների տրամադրման պահանջ: Այստեղ կարևոր է նշել, որ տեղեկության տրամադրման պարտականություն ունեցող մասնավոր մարմիններից տեղեկություն ստանալու իրավահարաբերությունները կարգավորվում են ոլորտային օրենքներով, և դրանց կիրարկման ժամանակ բաց է թողնվում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված երաշխիքները (տեղեկության տրամադրման ժամկետները, պատասխանատվությունը և այլն): Սրա լուծման համար առաջարկեցինք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի գործողությունը տարածել

նաև բոլոր այն իրավահարաբերությունների վրա, որտեղ կոնկրետ սուբյեկտը տեղեկություն տրամադրելու հստակ պարտականություն է կրում:

ՀՀ օրենսդրական համակարգը տեղեկության տրամադրման համընդհանուր պարտականություն է դրել նաև բոլոր մասնավոր մարմինների վրա, որոնցից տեղեկություններ կպահանջեն հատուկ սուբյեկտները (օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպան): Այստեղ, սակայն անտեսվել է փաստաբանների դերն ու նշանակությունը: Դրա բարձրացմանն և իրավաբանական օգնություն ստանալու անձի հիմանական իրավունքի երաշխավորմանն ուղղված անհրաժեշտություն ընդգծեցինք, համաձայն դրա՝ փաստաբանի կողմից որոշակի իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ պահանջվող տեղեկությունները մասնավոր մարմինների համար պետք է տրամադրման ենթակա լինեն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Ավետիսյան Է. Գ., Պետական անվտանգության պաշտպանությունը որպես տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի սահմանափակման հիմք, «Անվտանգության արդի հիմնախնդիրները: Հանրապետական գիտաժողովի նյութեր», Եր., «ԵՀ» հրատ., 2021, էջ 16-21:
2. Ավետիսյան Է. Գ., Մոռացված լինելու իրավունքի ու տեղեկատվության ազատության մրցակցությունը ՀՀ-ում, «ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր», Եր., 1(101), 2021, էջ 67-80:
3. Ավետիսյան Է. Գ., Մասնավոր մարմինների նկատմամբ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի կիրարկման իրավական սահմանները, «Օրինականություն» ՀՀ Դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., N126, «Աստղիկ Գրատուն», 2021, էջ 29-34:
4. Ավետիսյան Է. Գ., Տեղեկատվության ազատության իրավունքը որպես կարծիքի արտահայտման ազատության բաղադրատարր, «Օրինականություն» ՀՀ Դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., N129, «Աստղիկ Գրատուն», 2022, էջ 78-83:
5. Ավետիսյան Է. Գ., Ընդհանուր տեղեկատվության ազատություն և հատուկ տեղեկատվության ազատություն (հայեցակետ), «Արդարադատություն» գիտական հանդես, Եր., 2022, N 1 (56), էջ 47-53:
6. Ավետիսյան Է. Գ., Տեղեկատվության ազատության՝ որպես մարդու հիմնական իրավունքի տեսահրավական հիմքերն ու առանձնահատկությունները, «Գիտական Արցախ» գիտական հոդվածների պարբերական, Եր., № 2(13), 2022, էջ 91-100:
7. Ավետիսյան Է. Գ., Հատուկ տեղեկատվության ազատության ապահովումն ու պաշտպանությունը ՀՀ-ում՝ եվրոպական և միջազգային չափորոշիչների լույսի ներքո, «Գիտական Արցախ» գիտական հոդվածների պարբերական, Եր., № 3(14) 2022, էջ 58-67:
8. Ավետիսյան Է. Գ., Ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանադրահրավական երաշխիքներն ու առանձնահատկությունները, «Բանբեր» Եվրասիա միջազգային համալսարանի, Եր., № 2, 2022, էջ 26-38:

АВЕТИСЯН ЭДГАР ГУРГЕНОВИЧ

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ И ЗАЩИТЫ СВОБОДЫ ИНФОРМАЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫХ ГАРАНТИЙ И ЕВРОПЕЙСКИХ ПРАВОВЫХ СТАНДАРТОВ)

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – Публичное право. Защита состоится 11-го июля 2023 года в 15:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

РЕЗЮМЕ

Информация была одной из важнейших и востребованных ценностей в любой период истории человечества. От повседневных проблем до решения вопросов государственного значения часто связано с достоверной информацией из правильного источника.

Такая важность информации сформировала требование-право искать, получать и распространять информацию, признанную на международном и внутригосударственном уровнях-свободу информации. Она выражается, с одной стороны, в обеспечении свободы поиска, получения и распространения любой информации, с другой стороны, с учетом принадлежности власти к народу, следовательно, права человека быть максимально информированным о деятельности принадлежащей ему власти, в обеспечении права на получение информации, находящейся у общественной власти.

Интересно, что в отечественных правовых исследованиях комплексного обращения к свободе информации как к отдельному праву не было. Необходимость научного изучения этого права особенно возросла с внесением в Конституцию РА в редакции 2015 года поправок, согласно которым основное право на свободу информации нашло отражение в двух отдельных правах и статьях: в нормах свободы выражения мнение (статья 42) и право на получение информации (статья 51).

Цель диссертационного исследования-целостное изучение свободы информации как отдельного права человека и выявление проблем, возникающих вокруг ее реализации. Для достижения этой цели перед диссертацией были поставлены задачи исторического обращения к истокам и развитию свободы информации, представления правовых подходов, рамок защиты, выявления

составляющих «права» и «свободы», изучения соотношения со свободой выражения мнения, а также отдельного исследования двух проявлений свободы информации-общей свободы информации и свободой специальной информации.

Разделение общей свободы информации (свобода поиска, получения и распространения информации любым способом, статья 42 Конституции РА) и свободы специальной информации (свобода информации, находящейся у общественных органов, статья 51 Конституции РА) и построение на ее основе диссертации позволили представить как сущность и целостное значение основного права свободы информации, так и исследовать его отдельные проявления.

В ходе исследования впервые была представлена роль и развитие свободы информации в истории армянской правовой мысли, дано всеобщее понятие свободы информации в широком и узком смыслах, раскрыто предусмотренное Конституцией РА соотношение свободы выражения мнения и свободы информации, свобода общей и специальной информации, конкуренция свободы информации и права быть забытым, два проявления свободы информации у общественных органов-право на получение информации и на быть информирование, а также вопросы, касающиеся правоотношений, связанных с получением информации от частных органов.

Для максимальной защиты и обеспечения основного права на свободу информации в качестве ориентиров выступали европейские правовые стандарты, посредством которых поднимался ряд вопросов и выдвигались правовые меры для их решения.

Исследование, проведенное в диссертационной работе, даст возможность одновременной правовой оценки вопросов обеспечения и защиты основного права на свободу информации в современном мире изобилия информационных потоков. Проблемы, затронутые исследованием, результаты, направленные на их решение, а также выдвинутые новые подходы могут способствовать повышению эффективности дальнейших исследований основного права на свободу информации, а также решению возникших в его рамках правовых проблем.

RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY

EDGAR G. AVETISYAN

CONTEMPORARY ISSUES OF ENSURING AND PROTECTING FREEDOM OF INFORMATION IN THE REPUBLIC OF ARMENIA (IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL GUARANTEES AND EUROPEAN LEGAL STANDARDS)

Competition for the degree of Candidate of Juridical Sciences is the speciality of 12.00.02 - Public Law. The defence of the dissertation is scheduled for 11th July, 2023, at 15:00 in a panel session of the Professional Council 063 of Jurisprudence of Russian-Armenian University of the RA Higher Certification Commission (123, H. Emin, Yerevan, 0051)

SUMMARY

Information has been one of the most important and demanded values in any period of human history. From everyday problems to matters of state importance, the solution is often related to reliable information from the right source.

Such importance of information has been formed by the demand-right to seek, receive and spread information recognized at international and domestic level, that is, freedom of information. It is expressed on the one hand by ensuring the freedom to search, receive and spread any kind of information, on the other hand, taking into account democracy, and therefore the right of a person to be maximally informed about the activities of the authority belonging to him, by ensuring the right to receive the information held by the public authority.

It is interesting that domestic legal studies did not comprehensively refer to freedom of information as a separate right. The need for a scientific study of this right increased especially with the amendments made to the RA Constitution in the edition of 2015, according to which the basic right to freedom of information was reflected in two separate rights and articles: the norms of freedom of expression of opinion (Article 42) and the right to receive information (Article 51).

The aim of the dissertation is the complete study of freedom of information as a separate human right and the underline of problems arising around its realization. In order to achieve this goal, the dissertation is set to make a historical reference to the origin and development of freedom of information, to represent the visual legal approaches and the framework of protection, to identify the components of "right" and "freedom", to study the ratio with the freedom of expression of opinion, as well as to separately examine the problems of two manifestations of freedom of information: freedom of general information and freedom of special information.

The separation of general freedom of information (freedom to seek, receive and spread information by any means of information, Article 42 of the RA Constitution) and special freedom of information (freedom of information held by public bodies, Article 51 of the RA Constitution) and the creation of a dissertation based on it allowed to present both the essence and full meaning of the basic right to freedom of information, as well as to examine its individual manifestations.

The study has for the first time presented the role and development of freedom of information in the history of Armenian legal thought, the universal concept of freedom of information was given in broad and narrow senses, the ratio between the freedom of expression of an opinion and freedom of information, general and special information freedom and the competition between freedom of information and the right to be forgotten were revealed. Moreover, it has discussed the two manifestations of freedom of information with public bodies - the right to receive information and to be informed, as well as issues related to the legal relationship of receiving information from private bodies.

For the maximum protection and provision of the basic right to freedom of information, the European legal standards acted as guidelines, through which a number of problems were raised and legal measures for their solution were proposed.

The research carried out in the dissertation will provide an opportunity to make a simultaneous legal assessment of the issues of ensuring and protecting the basic right to freedom of information in the modern world of abundance of information flows.

The main issues raised by the research, the results aimed at solving them, as well as the new approaches put forward, can contribute to increasing the effectiveness of further research on the basic right to freedom of information, as well as to the solution of legal problems arising within its framework.